10	Չեղբ բերվող (ներմուծվող) ապահովումների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Հովվարդ Կարագոյան» ԲԲԳԿ Երևանում գնելու է 630.000 հար ֆրանսիական «Կոլխիցին» 1մգ ղեկորային և հանձնելու է պարենիական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին հիվանդներին անվճար բաշխելու համար: «Սոդուս Իմեք» ՍՊԸ - ի հետ 14.01.2016թ. կնքված «Կոլխիցին» 1մգ ղեկորային մատակարարման № Գ-01/2016 պայմանագիր 36.029.700.00 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, առանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չկան:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, մարզային բժշկական համալիրի և Պարենիական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ մարզպետարանների և մարզային կարգապահության կարգապահության հիվանդության հիվանդ երեխաների օգնության համար «Հովվարդ Կարագոյան» ԲԲԳԿ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինությունները, ԼՂՀ առողջապահության նախարարության կողմից համապատասխան և տարեկան հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործության կազմակերպության հանձնաժողովին:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2016 թվականի N Մ-113- Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբու-
ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆի-
նանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 3-ի N 07/80-2/3442-16 ու
փետրվարի 4-ի N 06/3-3/3684-16 և Հայաստանի Հանրապետության առողջապահու-
թյան նախարարության 2016 թվականի փետրվարի 4-ի N ԱՄ/22.2/1019-16 եզրակացու-
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմ-
նադրամի կողմից ձեռք բերված բեռը (վիրահատական պարագաներ՝ 1 տեղ, 6.80 կգ,
1,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը,
«ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի
«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրա-
կանացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշ-
մամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 փետրվարի 2016 թվականի N Մ-114-Ա

**«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՔ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱԶՂՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի ու Տավուշի մարզների:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հայասրանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, իմնք ընդունելով Հայասրանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 4-ի N 07/80-2/3524-16 և փետրվարի 15-ի N 1614-7A64-2949, Հայասրանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 02/14/16124-15, Հայասրանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N ԱՄ/22.2/15058-15, Հայասրանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայասրանի Հանրապետության ոստիկանության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 24/3761 եզրակացությունները, **որոշում է .**

1. Բարեգործական որակել «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (<< քաղ. Երևան, Սարյան 8, բն.4, ՀՎՀՀ՝ 01533403) 2016-2018 թվականներին իրականացվող՝ 1,695,082 դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազրման ազգային ծրագրին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

Աջակցություն ՀՀ-ում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին

Ծ Ր Ա Պ Ի Բ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագիրը կոչված է աջակցելու ՀՀ-ում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին և ծրագրի նպատակն է՝ <ul style="list-style-type: none"> Նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածումը և պահպանել ցածր տարածվածությունը բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում, Տրամադրել աջակցություն և խնամք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մասնաշին արտոնություններից:
3.	Բարեգործը	ՉԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամ 1214 Վերներ, Մեն, Շվեյցարիա
4.	Ծրագիրը կատարողը	Առաքելություն Արևելք ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ ՀՀ, Երևան 0019, Մալյան 8, բն. 4, ՀՎՀՀ՝ 01533403)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրի իրականացման վայրը՝ ք. Երևան, ՀՀ մարզեր, ծրագրի բնագավառը՝ առողջապահություն:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 1,695,082 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում՝ <ul style="list-style-type: none"> ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության առավել խոցելի խմբերի ներկայացուցիչները, ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է 2016թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների	Սույն ծրագիրը հանդիսանում է ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013թ.



հունվարի 15-ի N Մ-070-Ա որոշմամբ հաստատված «Աջակցություն ՀՀ-ում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, որով 2» ծրագրի շարունակությունը:
Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

Ծրագրի նպատակը	Միջոցառումների նկարագրություն	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալ (ԱՄՆ դոլար) և ժամկետները			
		1-ին տարի 01.01.16- 30.09.16	2-րդ տարի 01.10.16- 30.09.17	3-րդ տարի 01.10.17- 31.12.18	Ընդամենը
1. Նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածումը և պահպանել ցածր տարածվածություն բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, մարմնավաճառներ, հոմոսեքսուալ տղամարդիկ)	<ul style="list-style-type: none"> Կամավոր խորհրդատվության և հետազոտության տրամադրում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչներին, Տեղեկատվական տպագիր նյութերի տրամադրում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչներին, Պահպանակների տրամադրում բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի ներկայացուցիչներին, Ներարկիչների և սպիրտային խմուժների տրամադրում թմրամիջոցների ներարկային օգտագործողներին: 	334,308	378,572	348,504	1,061,384
2. Տրամադրել աջակցություն և խնամք ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց	<ul style="list-style-type: none"> Շարժական բժշկական ծառայությունների տրամադրում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, Խորհրդատվության (հոգեբանական, բժշկական) տրամադրում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, Փոխօգնության խմբերի կազմակերպում, Մենզային փաթեթների տրամադրում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց: 	91,161	97,420	108,695	297,276
3. Կազմակերպական ծախսեր	<ul style="list-style-type: none"> ՄԻԱՎ-ի աշխատակազմի աշխատավարձեր Ադմինիստրատիվ ծախսեր (գրասենյակի և պահեստի վարձակալություն, կոմունալ ծախսեր և այլ ծախսեր) Ֆինանսական աուդիտ 	110,110	112,100	114,213	336,423

2/10

<p>10. Չեղբ բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Օրագրի իրականացման 3 տարիների ընթացքում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքներն ու ծառայությունները.</p> <table border="1"> <thead> <tr> <th>հ/հ</th> <th>Ապրանքի/ծառայության անվանում</th> <th>Չափման միավոր</th> <th>Քանակը, 3 տարվա համար</th> <th>Նախատեսվող գումարը 3 տարվա համար, դոլար</th> </tr> </thead> <tbody> <tr><td>1</td><td>Պահպանակ (ներմուծում)</td><td>հատ</td><td>2,559,613</td><td>96,518</td></tr> <tr><td>2</td><td>Ներարկիչ (գնում ՀՀ-ից)</td><td>հատ</td><td>1,991,000</td><td>75,076</td></tr> <tr><td>3</td><td>Սպիրտային խմուժ (գնում ՀՀ-ից)</td><td>հատ</td><td>2,009,900</td><td>24,923</td></tr> <tr><td>4</td><td>Արագ թեսթեր (գնում ՀՀ-ից)</td><td>հատ</td><td>18,140</td><td>30,203</td></tr> <tr><td>5</td><td>Լուրբիկատ (գնում ՀՀ-ից)</td><td>հատ</td><td>151,583</td><td>18,190</td></tr> <tr><td>6</td><td>Սկաբիֆիկատոր (գնում ՀՀ-ից)</td><td>հատ</td><td>18,900</td><td>285</td></tr> <tr><td>7</td><td>Մենդային ծանրոց (գնում ՀՀ-ից)</td><td>հատ</td><td>148</td><td>3,708</td></tr> <tr><td>8</td><td>Տեղեկատվական տպագիր կյութեր (գնում ՀՀ-ից)</td><td>հատ</td><td>3,180</td><td>1,757</td></tr> <tr><td>9</td><td>Բենզին (գնում ՀՀ-ից)</td><td>լիտր</td><td>44,000</td><td>40,000</td></tr> <tr><td>10</td><td>Ֆինանսական աուդիտ (գնում ՀՀ-ից)</td><td>-</td><td>-</td><td>26,592</td></tr> </tbody> </table>	հ/հ	Ապրանքի/ծառայության անվանում	Չափման միավոր	Քանակը, 3 տարվա համար	Նախատեսվող գումարը 3 տարվա համար, դոլար	1	Պահպանակ (ներմուծում)	հատ	2,559,613	96,518	2	Ներարկիչ (գնում ՀՀ-ից)	հատ	1,991,000	75,076	3	Սպիրտային խմուժ (գնում ՀՀ-ից)	հատ	2,009,900	24,923	4	Արագ թեսթեր (գնում ՀՀ-ից)	հատ	18,140	30,203	5	Լուրբիկատ (գնում ՀՀ-ից)	հատ	151,583	18,190	6	Սկաբիֆիկատոր (գնում ՀՀ-ից)	հատ	18,900	285	7	Մենդային ծանրոց (գնում ՀՀ-ից)	հատ	148	3,708	8	Տեղեկատվական տպագիր կյութեր (գնում ՀՀ-ից)	հատ	3,180	1,757	9	Բենզին (գնում ՀՀ-ից)	լիտր	44,000	40,000	10	Ֆինանսական աուդիտ (գնում ՀՀ-ից)	-	-	26,592
հ/հ	Ապրանքի/ծառայության անվանում	Չափման միավոր	Քանակը, 3 տարվա համար	Նախատեսվող գումարը 3 տարվա համար, դոլար																																																				
1	Պահպանակ (ներմուծում)	հատ	2,559,613	96,518																																																				
2	Ներարկիչ (գնում ՀՀ-ից)	հատ	1,991,000	75,076																																																				
3	Սպիրտային խմուժ (գնում ՀՀ-ից)	հատ	2,009,900	24,923																																																				
4	Արագ թեսթեր (գնում ՀՀ-ից)	հատ	18,140	30,203																																																				
5	Լուրբիկատ (գնում ՀՀ-ից)	հատ	151,583	18,190																																																				
6	Սկաբիֆիկատոր (գնում ՀՀ-ից)	հատ	18,900	285																																																				
7	Մենդային ծանրոց (գնում ՀՀ-ից)	հատ	148	3,708																																																				
8	Տեղեկատվական տպագիր կյութեր (գնում ՀՀ-ից)	հատ	3,180	1,757																																																				
9	Բենզին (գնում ՀՀ-ից)	լիտր	44,000	40,000																																																				
10	Ֆինանսական աուդիտ (գնում ՀՀ-ից)	-	-	26,592																																																				
<p>11. Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր</p>	<p>Օրագրի իրականացման 3 տարիների ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ կազմակերպական ծախսեր.</p> <table border="1"> <thead> <tr> <th>հ/հ</th> <th>Կազմակերպական ծախսեր կազմը</th> <th>Նախատեսվող գումարը 3 տարվա համար, դոլար</th> </tr> </thead> <tbody> <tr><td>1</td><td>ՕԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձեր</td><td>247,734</td></tr> <tr><td>2</td><td>Ադմինիստրատիվ ծախսեր (գրասենյակի և պահեստի վարձակալություն, կոմունալ ծախսեր և այլ ծախսեր)</td><td>62,097</td></tr> <tr><td>3</td><td>Ֆինանսական աուդիտ</td><td>26,592</td></tr> <tr><td colspan="2">Ընդամենը</td><td>336,423</td></tr> </tbody> </table>	հ/հ	Կազմակերպական ծախսեր կազմը	Նախատեսվող գումարը 3 տարվա համար, դոլար	1	ՕԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձեր	247,734	2	Ադմինիստրատիվ ծախսեր (գրասենյակի և պահեստի վարձակալություն, կոմունալ ծախսեր և այլ ծախսեր)	62,097	3	Ֆինանսական աուդիտ	26,592	Ընդամենը		336,423																																								
հ/հ	Կազմակերպական ծախսեր կազմը	Նախատեսվող գումարը 3 տարվա համար, դոլար																																																						
1	ՕԻԳ-ի աշխատակազմի աշխատավարձեր	247,734																																																						
2	Ադմինիստրատիվ ծախսեր (գրասենյակի և պահեստի վարձակալություն, կոմունալ ծախսեր և այլ ծախսեր)	62,097																																																						
3	Ֆինանսական աուդիտ	26,592																																																						
Ընդամենը		336,423																																																						
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Օրագրի իրականացման ընթացքում "Առաքելություն Արևելք" ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Առողջապահության նախարարության և հետևյալ հասարակական կազմակերպությունների հետ. "ՉԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք" շ.հ, Հայկական կարմիր խաչի ընկերություն, "ՉԻԱՀ-ի կանխարգելման միավորում" շ.հ, "Հույս և օգնություն" շ.հ, "Ուսուցում հանուն առողջության պահպանման" շ.հ, "Նոր սերունդ" շ.հ, "Իրական Աշխարհ Իրական Մարդիկ" շ.հ, "Իրական մարդկանց հայկական ցանց" շ.հ</p>																																																							
<p>13. Օրագրի արդյունավետության նկատմամբ հարցազրույցի և հարցազրույցի արդյունավետության</p>	<p>Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողություն իրականացվում է "Առաքելություն Արևելք" կազմակերպության գլխամասային գրասենյակի, ինչպես նաև, ՉԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի և հիմնադրամի տեղական գործակալի, ՀՀ-ում հիմնադրամի միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) կողմից: "Առաքելություն Արևելք" ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղն վերահսկվում է նաև արտաքին աուդիտի, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ հարկային մարմինների կողմից:</p>																																																							



Հայաստանյան մասնաճյուղ

2/10
[Handwritten Signature]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2016 թվականի N Մ-115- Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Բնության համաշխարհային
հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2016 թվականի փետրվարի 5-ի N 07/80-2/3705-16 ու N 06/3-3/3811
-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի
(WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան)
էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային
մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետու-
թյան կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015
թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1455-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գորեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09209539) 2015 թվականի նոյեմբերի 2-ին կնքված՝
N 04.1/15-BMZ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի
Սվարանցի համայնքի խնելու ջրի ջրատար համակարգի խողովակաշարի հնամաշ
հատվածների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 6,087,260 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու
Սյունիքի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

**19 փետրվարի 2016 թվականի N Մ-116- Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան
մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 8-ի N 07/80-2/4130-16 և փետրվարի 10-ի N 06/3-3/4435-16 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի փետրվարի 5-ի N ԱՄ/22.2/1097-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք՝ «Իմիպենեմ», 69 արկղ, 570 կգ քաշով, 59,940 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,892.17 եվրո, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկոլյոզի և դեղորայքակայուն տուբերկոլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2016 թվականի N Մ-117- Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 07/80-2/4814-16 և փետրվարի 15-ի N 06/3-3/5275-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի՝ (լաբորատոր սարքեր և գործիքներ՝ իրենց բաղադրամասերով, 5 տեղ, 39.55 կգ (87.2 LB) ընդհանուր քաշով, 9,437.31 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 60 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երեվանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2016 թվականի N Մ-118-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 07/80-2/4815-16 և փետրվարի 15-ի N 06/3-3/5296-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից՝ որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի՝ (լաբորատոր սարքեր՝ իրենց բաղադրամասերով, 5 տեղ, 54 կգ ընդհանուր քաշով, 6,010 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից փոխադրման և ապահովագրման ծախսերը կազմել են 468 ԱՄՆ-ի դոլար, «Չվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երեվանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2015 թվականի N Մ-119-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՍՑԵՈՎ ԱՍՏՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 8-ի N 07/80-2/4134-16 և փետրվարի 10-ի N 06/3-3/4568-16 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակելի շվեյցարահայ բարերար Միրան Բարոնյանի կողմից որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի՝ քիմիական լաբորատորիայի օգտագործված կահույք՝ իր բաղադրամասերով (1 տեղ, 2,408.6 կգ ընդհանուր քաշով, 1,900 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 1,890 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երեվանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կրթության և գիտության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Ս Ա Տ ՈՒ Մ Ե Մ,
«Քիմիական լաբորատորիայի համակարգման» հիմնադրամի
պրնսիպալ անդամության և միջազգային
համագործակցության գծով



Գ. Գ. Գևորգյան

2/11.3

Քիմիական լաբորատորիայի հիմնադրամի (մասնագուցակ)

N:	Անուն	Քանակ (հատ)	Նեոտ քաշ (կգ)
1.	Երկդրնանի փակվող պահարան, 120x82x53սմ	2	83.0
2.	Պտուտակներով պլաստմասայե արկղ	1	1.0
3.	Երկդրնանի պահարան, 130.5x76սմ	1	123.0
4.	Շրջանակ, 150x98սմ	1	4.8
5.	Պահարան՝ 5 դարակով, 60.5x48.5x78.5սմ	1	238.4
6.	Ապակեղեն (լվացարան/դարակ)	3	20.0
7.	Պահարան, 90x88սմ	4	116.8
8.	Պլաստիկ արկղ (ներդիր) մոխրագույն, 51 x44x9.3սմ	1	1.0
9.	Պլաստիկ արկղ՝ սպիտակ, 31.5x41,2x8.6սմ	1	1.0
10.	Պլաստիկ սևուտեղ՝ մոխրագույն, 54x47x3սմ	1	1.5
11.	Երկդրնանի սեյֆ, 120x56սմ	1	220.0
12.	4 դարակով փակվող պահարան, 48.3x45x64.5սմ	2	71.8
13.	Երկդրնանի հանդերձապահարան, 82.3x90.2x53սմ	1	85.0
14.	Երկաթյա 2 Ս-աձև սևուտեղ, 60x25 հաստությունը 2սմ	1	2
15.	Պահարան՝ 1 դրնանի, 1 դարակով, 60.5x78x48.5սմ	1	84.0
16.	Հանդերձապահարան երկդրնանի, 1 դարակով, 90.5x78x48.5սմ	1	162.0
17.	Ջրաքաշ/ ձագարաձև	2	2.1
18.	Կցամաս՝ մոխրագույն, 254x33.5x83սմ	1	117.7
19.	Կցամաս՝ մոխրագույն	1	56.2
20.	Սետաղյա կաղապար	1	11.4
21.	Փայտե բաղադրիչ, 135x303x10սմ	1	29.5
22.	Փայտե հեծան, 303 x 67/41 B 10 սմ	1	14.0
23.	Պահարան՝ երկդրնանի, 5 շարժական դարակով, մեկը՝ նեղ դարակով, 200x120x56.5սմ	1	155.7
24.	Պահարան՝ երկդրնանի, 5 շարժական դարակով, մեկը՝ նեղ դարակով, 200x90.3x53.5	1	65.0
25.	Ապակեղենը լվանալու հարմարանք/ պահարան	1	19.5
26.	ՊՎՔ/պոլիէթիլենի խողովակ՝ մոխրագույն	1	1.4
27.	ՊՎՔ/պոլիէթիլենի խողովակ՝ սև	1	0.6
28.	Մեծ խողովակ, մոխրագույն	1	6.5
29.	Փական (մետաղյա խողովակ)	1	1.0
30.	Ջրաքաշ խողովակ՝ սև, փոքր	1	1.5

2/11.3

31.	Գիպսե արմատորա	1	70.5
32.	Մալուխ/զանակներ	1	2.0
33.	Մետաղյա խողովակներ	1	2.0
34.	Տախտակներ՝ էլեկտրական վահանակով	1	256.7
35.	Մետաղյա թիթեղ/ծածկ 178x159սմ	1	22.0

Նետտո քաշը՝ 2050.6կգ

Բրուտո քաշը՝ 2408.6կգ

Գումար*	10 դոլար
Առաքում	1890 դոլար
Շնորհամենք	1900 դոլար

* Մույնով հաստատվում է, որ վերը թվարկվածները նվիրաբերվել են Երևանի պետական համալսարանին (ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյանի 1):

Կահույքը նախատեսված է քիմիական լաբորատորիայի համար, այն օգտագործվելու է նվիրաբերվել է նվիրատուի կողմից: Այն ոչ մի կոմերցիոն կամ մաքսային արժեք չունի: Մոտավոր գինը կազմում է 1900 ԱՄՆ դոլար:



Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ



Երևանի Պետական Համալսարան>> հիմնադրամիջոցառման նպատակով Երևանի պետական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով

Գ. Գ. Գևորգյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 փետրվարի 2016 թվականի N Մ -120- Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 5-ի N 07/80-2/3735-16 և N 06/3-3/3810-16 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն-93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N 080/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 113,993,174 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 փետրվարի 2016 թվականի N Մ -121- Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն) (1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 8-ի N 07/80-2/4125-16 և փետրվարի 5-ի N 06/3-3/3809-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականերին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱԲ ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N 079/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Կոտայքի մարզի Փյունիկ գյուղի «Շիին Շողիկ» ճամբարի կենտրոնական մուտքի վերակառուցման նախագծանախահաշվային փաթեթի մշակման աշխատանքների իրականացում՝ 850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 փետրվարի 2016 թվականի N Մ- 122 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-916-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 3-ի N 07/80-2/3466-16 և փետրվարի 4-ի N 06/3-3/3685-16 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքների դիմակայունության բարձրացում ՄԻԱՎ-ի և բնական աղետներին հաջորդող վարակիչ հիվանդությունների նկատմամբ» ծրագրի մասին» N Մ-916-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հոթել Ալվա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011896) 2016 թվականի հունվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,231,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Տոսպ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2016 թվականի հունվարի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հագուստի պատվիրում՝ 582,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2016 թվականի N Մ- 123 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1370-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2016 թվականի փետրվարի 11-ի N 07/80-2/4665-16 և փետրվարի 11-ի N 06/3-3/4744-16
եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի 2016
թվականի հունվարի 29-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-928-Ա որոշմամբ հաստատված
ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1370-Ա որոշման 1-ին կետի 1-ին
ենթակետում «2012 թվականի հունվարի 21-ին կնքված՝ N 116483848 պայմանագրում»
բառերը փոխարինել «2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N 118814855 պայմանագրում»
բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 փետրվարի 2016 թվականի N Մ-124 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՅՎՈՂ
«ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 07/80-2/4811-16 և փետրվարի 17-ի N 06/3-3/5158-16 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 15-ի N 03/14/1534-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 700,000 դրամ արժողությամբ «Մանրանկարչության Արվեստի կենտրոնի տնտեսական պայմանների բարելավման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրանական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N 008436 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Զուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2013 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 7-13-102 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի օգոստոսի 4-ին կնքված՝ N 112756191 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-

կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշման շրջանակում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն կատարվող հարապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
 ՄԱՅ 20 2016 թ. 14:50 ԾՆԻ
 ՎՈՐՁԱՆԵՑՄԱԿԱՆ ԲԱԺԵՆ
 ՄՈՒՇԵՂ ԵՊՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 «16»



Մանրանկարչության Արվեստի Կենտրոնի տնտեսական պայմանների
 Ծ Ր Ա Գ Ի Ր

21.2/1

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է բարելավել Մանրանկարչության Արվեստի Կենտրոնի սաների ուսումնակրթական պայմանները, որտեղ նրանք կրթվում և դաստիարակվում են ազգային եկեղեցական ոգով, հաղորդակից դառնում ազգային և համաշխարհային արվեստներին և արհեստներին: Ակտեղ բացահայտվում են սաների ունակություններն ու նախասիրությունները, տրվում է նախնական և մասնագիտական կրթություն, որը նպաստում է անհատի ձևավորմանը
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ 6-րդ փողոց, 29 տուն, բնագավառը՝ տնտեսական:
6	Ծրագրի բյուջեն	700 000 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Քանաքեռ-2եյթուն համայնքի 5-18 տարեկան մոտ 65 շնորհալի երեխաները
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01 հունվարի 2016թ. – 31 դեկտեմբերի 2017թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մանրանկարչության Արվեստի Կենտրոնն ապահովել խմելու ջրով, էլեկտրաէներգիայով և հեռախոսակապով՝ 700.000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2016թ. – 31 դեկտեմբերի 2017թ.:</p> <p>Մանրանկարչության Արվեստի Կենտրոն - էլեկտրաէներգիայի մատակարարում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Հյուսիս» մասնաճյուղի կողմից, պայմանագիր N 008436՝ կնքված 18.07.2008 թ., (ՀՀ ք.Երևան, Քոչարի փող. 13ա, ՀՎՀՀ 01520882), 400.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,</p> <p>- Ջրի մատակարարում և ջրահեռացում «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից, պայմանագիր՝ կնքված 15.01.2013թ., (ՀՀ ք.Երևան, Աբովյան 66ա, ՀՎՀՀ 01555351), 100.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ.:</p> <p>- Հեռախոսակապ տրամադրում «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ -ի կողմից, պայմանագիր N112756191 (ք. Երևան, Սիարոնյան 2, ՀՎՀՀ 02500052), 200.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ:</p>
10.	Չեղջ բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է սպառել 100.000 դրամի ջուր, 400.000 դրամի էլեկտրաէներգիա, 200.000 դրամի հեռախոսակապ, ընդամենը՝ 700պ.000 ՀՀ դրամով, առանց ԱԱՀ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի, Քանաքեռ-2եյթուն համայնքի քաղաքապետարանների հետ: 21.2/1
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է արմինիստրատիվ հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 փետրվարի 2016 թվականի N Մ- 125 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆՑՎՈՂ
«ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ՊԱՏԿԱՆ ՎԱՆՔՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 12-ի N 07/80-2/5067-16 և փետրվարի 17-ի N 06/3-3/5159-16 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 15-ի N 03/14/1533-16 եզրակացությունները, որոնք նույն օրը:

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 382,000,000 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերի տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գլխի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրոնական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերին 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 210,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի նոյեմբերի 10-ին կնքված՝ N 08311157161 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերին 2016 թվականի հունվարի 1-ից մինչև

2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարում՝ 172,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրոյթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերի տնտեսական պայմանների բարելավում
Օ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերի՝ Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Շողակաթ, Սուրբ Խոր Վիրապ վանքերի, Սուրբ Գեղարդավանքի և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տնտեսական պայմանների բարելավումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳԳՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Շողակաթ, ՀՀ, Կոտայքի մարզ, Սուրբ Գեղարդավանք, ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառաղ (Սուրբ Խոր Վիրապ վանքային համալիր), ք. Երևան, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Բնագավառը՝ տնտեսական:
6	Ծրագրի բյուջեն	Ընդամենը 382 000 000 ՀՀ դրամ, որից՝ 2016թ. 191.000.000 դրամ, 2017թ. 191.000.000 դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և պատկան վանքերի Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Շողակաթ, Սուրբ Խոր Վիրապ վանքերը, Գեղարդավանքը և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ապահովել էլեկտրաէներգիայով և գազով՝ 382,000,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.:

Սուրբ Գայանե վանք
 - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2016թ. 7.000.000 և 2017թ. 7.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 14.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 01.08.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 170000000230, «Մուսալեռ» մասնաճյուղ:
 -նախատեսվում է գազի մատակարարում 2016թ. 6.000.000 և 2017թ. 6.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 12.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Գազարտ Արմենիա» (ՀՎՀՀ 00046317) ՓԲԸ-ի հետ 10.11.2015 կնքված թիվ 08311157161 պայմանագրի հիման վրա, Արմավիրի ԳԳՍ ք. Արմավիր:

Սուրբ Հռիփսիմե վանք
 - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2016թ. 6.000.000 և 2017թ. 6.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 12.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 01.08.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 170000000230, «Մուսալեռ» մասնաճյուղ:

ՄԻ 2/2



		<p><u>Սուրբ Շողակաթ վանք</u> - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2016թ. 1.000.000 և 2017թ. 1.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 2.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 01.08.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 170000000231, «Մուսալեռ» մասնաճյուղ:</p> <p>ՄԻ 2/2</p> <p><u>Սուրբ Խոր Վիրապ վանք</u> - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2016թ. 3.000.000 և 2017թ. 3.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 6.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 01.08.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 330000001178, «Արաքս» մասնաճյուղ:</p> <p><u>Սուրբ Գեղարդավանք</u> - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2016թ. 3.000.000 և 2017թ. 3.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 6.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 01.08.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 630008130045, «Գեղանա» մասնաճյուղ:</p> <p><u>Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի</u> - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2016թ. 25.000.000 և 2017թ. 25.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 50.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 01.08.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 011206262398 և 010704230550, «Հարավ» մասնաճյուղ</p> <p>Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին - նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում 2016թ. 60.000.000 և 2017թ. 60.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 120.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀՎՀՀ 01520882) ՓԲԸ-ի հետ 01.08.2013թ. կնքված թիվ ԿՊ0054 պայմանագրի հիման վրա, Հավելված N4, քարտի համարը՝ 170000000233, «Մուսալեռ» մասնաճյուղ: -նախատեսվում է գազի մատակարարում 2016թ. 80.000.000 և 2017թ. 80.000.000 ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 160.000.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.: «Գազարտ Արմենիա» (ՀՎՀՀ 00046317) ՓԲԸ-ի հետ 10.11.2015 կնքված թիվ 08311157159 պայմանագրի հիման վրա, Արմավիրի ԳԳՍ ք. Արմավիր:</p>
10.	Չեղբ բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է սպառել մոտ 382.000.000 դրամի գազ և էլեկտրաէներգիա՝ առանց ԱԱՀ-ի, 1 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2017թ.:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական միջոցառումները	Մյլ ծախսեր չեն նախատեսվում
		2ի նախատեսվում:
		Նախատեսվում է ադմինիստրատիվ հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողով կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ համեմատողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 փետրվարի 2016 թվականի N Մ-126 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅՈՐԴԱՑ ՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի փետրվարի 17-ի N 07/80-2/5656-16 և փետրվարի 16-ի N 06/3-3/5543-16 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի փետրվարի 17-ի N 02/14/1693-16 եզրակացությունները, որոնք ունենում է:

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 104,400,000 դրամ արժողությամբ «Հայորդաց տների տնտեսական պայմանների բարելավման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրոնական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արաբկիրի, Մալաթիայի, Նոր-Նորքի և Էջմիածնի հայորդաց տներին 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 26,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Հայաստանի էլեկտրոնական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մայիսի 19-ին կնքված՝ N 20029 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Աշտարակի հայորդաց տան 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

